




Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՆՈՐԻՆ

ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅՐԱՊԵՏՆ ՈՒ ԻՐ ԿՈՆԴԱԿԸ



Երտահունչ զգացումի ու բյուրեղացած խորհուրդի վալերա-րագիր մըն է Վեհափառ Գեորգ Զ-ի կոնդակը, զոր հրատարակած ենք մեր ներկա թվի առաջին էջին սլոյս, արտատպելով Ամենայն Հայոց կաթողիկոսութեան պաշտոնաթերթ «Էջմիածին»-ի հոսովար—փետրվար համարին: Հայրագործը կրոնականի ու իմաստուն ազգային առաջնորդի հարազատ ձայնն է, որ կխոսի իր աշխարհացրիվ հոտին տառապանքն վերջ տա՞լու շնչառով: Եվ անվերջ զգալիությամբ մը, որ թանձրացել է Հայ ժողովրդին հաղթանակ աղետներուն ու դժբախտությանց դաժան փորձառություններին:

Արդար է հոս կրկնել ու շեշտել, թե էջմիածնի արդի գահակալը, հայ եկեղեցիի հիմնադրութենեն ի վեր՝ անոր տասնյակ մը մեծափառ ու լուսադեմ Հայրապետներն մին կրցավ հանդիսանալ: Որովհետեւ ճշմարիտ մեծության անսխալի չափանիշը՝ միայն անձնական արժանիքները ու անոնց շնորհիվ իրագործված արդյունքները կկազմեն: Եվ Վեհ. Գեորգ Զ. կաթողիկոս, նախ իբրև տեղակալ ու շորս տարի՛ք տրպես Հայրապետ՝ փայլեցավ այնպիսի հատկություններով, իր բարձր կոչումին ծանր պատասխանատվությունները կրեց այնպիսի անընդունակ կորովով ու հեռատես իմաստությամբ և այնպիսի նշանակելի հաջողություններ ապահովեց, որոնցմով սակավաթիվ գահակալներ հայտնվեցին և կուսավորչին ի վեր:

Ժամանակակիցներ կփորձվին ընթացիկ գործունեության հասարակ մասնիկներ ներկատել նույնիսկ հեռահաս նշանակությամբ ու կենսական արարքներ: Բայց պատմությունը, որ ժողովրդի մը ամբողջ անցյալին պարտությանց ու փառքերուն, անկումներուն ու վերականգնումներուն հյուսած համայնապատկերին կնայի՝ կրնա անաչառ դատաստան տեսնել և կատարել ճշգրիտ գնահատանքը շահված արդյունքներուն ու փաստակող դեմքերուն:

Մեր խոր համոզումով Գեորգ Զ. կաթողիկոս իրավունք ունի վստահությամբ նայելու պատմության իրեն մասին տալիք վճիռին: Քիչեր այնքան ուժգնորեն ու հստակորեն սահմաններ են հայ եկեղեցիի տերն ու անոր պետին կոչումը՝ ինչպես ան կբանաձևվի կոնդակի սկզբնավորության: Շալատաճեցայց Ազգային Առաքելական Սուրբ եկեղեցին ոչ միայն հոգևոր—կրոնական հաստատություն է, այլ և միաժամանակ ազգային-հայրենական: Ազգային-կրոնական այս երկակի բնույթան այս ներդաշնակ միասնության մեջ է բարոյական հմայքն ու պատմական խորհուրդը լուսավորչանիմն ազգայան հայ եկեղեցու, որի անառատության և վեհիքավության համար դարեւ շարունակ հալածվել, մարտնչել և մարտիրոսացել է բազմաշարժար հայ ժողովուրդը:

Տրդատ թագավորի ու Լուսավորչի օրերեն «կայալ և անոնց օրինակով հայոց պետական իշխանությունն ու կրոնական հեղինակությունները ներդաշնակ գործակցու-

թյամբ առաջնորդել են հայ ժողովուրդը, անոր քաղաքական զորացման ու հոգևոր—մշակութային զարգացման ջանքերը վարելով։ Եվ ինչպես անոնց համերաշխությունը բարերար եղած է երկրին, ազգային միասնականության ստատարելով և նվազագույնին իջեցնելով ներքին անիշխանությունն ու մեղմացնելով արտաքին թշնամիներու շարիքները՝ նույնպես, անոնց մրցակցությունն ու հակառակությունը խորացուցեր են ժողովուրդին պատակտումները և հայրենիքը անպաշտպան բացներ են օտար ներխուժողներու հուրին ու սուրին առջև։

Ուրեմն դարերու ավանդն է, զրված արյունով և տառապանքով, թե հայ եկեղեցին ո՛չ միայն հոգևոր—կրոնական, այլ և ազգային—հայրենական հաստատություն է։ Այդ շերտ հավատքով ներշնչված ու զրահված եղավ հայրապետը, իր պատմական ձեռնարկներու հետապնդման դժվարին ճամբուն վրա։ Իր նախորդներին շատեր, Մեծն ներսեսան սկսյալ, ձեռամբարձ աղոթքի էին ճակատամարտի մը հաղթանակին համար, և մինչև Բագրատունիներն ու Ռուբինյանները և հետո ամբողջ վեց դարեր, թանկարժեք նվերներով զացեր էին կայսրներու, ամիրապետներու, սուլթաններու, շահերու ու ձարերու ոտքերը, անոնց ցասումը մեղմելու, սրտերը կակոտղցնելու համար, որ քիչ հայ շարդեն, քիչ գերեվարեն, քիչ ավերեն ու թալանեն։

Փետրգ Զ Հայրապետը նոր շրջան մը ողջունելու բախտավորության հետ՝ անոր բարիտորոշ նշանակությունն ըմբռնելու փաստությունն ունեցավ։ Ան աղոթեց, որ Խորհ. Միությունը, Հայաստանն ու բոլոր դաշնակից պետությունները կարենան ադառարար հաղթանակով ֆաշիզմի մահացու ճիրաններեն փրկել մարդկությունը։ Բայց նաև ձեռնարկեց Սասունցի Դավիթի անվան հրապարակալու զորաշուքին կազմելուն, դրապես օգնելու համար այդ ճակատագրական մարտնչության լծված հայ ժողովուրդին և արգար կողմին։ Ազգային անխնջ, անձնուրաց կրոնապետն էր, որ իր հոտին ներկա բարօրության ու ապագա միավորման վսեմ նպատակին նվիրված էր։ Եվ կրցավ տեսակցիլ վարչապետ Ստալինի հետ, ոչ ոսկիի ու աղամանդի կաշառք տանելով, ոչ ալ զլիտուն վրա հպատակության մոխիրը ցանկելով, այլ իր արժանիքներուն ու գործին ուժովը, հայ ժողովուրդին ցուցաբերած հավատարմության, քաջության ու զո-

հողության վարկովը։ Եվ անոր հետ՝ հայրենադարձի փրկարար շարժումին, Հայաստանի պատմական հողերու վերադարձին ու էջմիածնի հոգևոր ու նյութական վերականգնումին մասին խոսելու առիթն կունենար։

Հազարամյակներու արտագաղթեն մերջ հայոց՝ հայրենադարձը իրականություն դարձավ և շուրջ 100 հազար տարեգիր հայեր պանդխտութենե հայաստան վերադարձան։ Էջմիածնի մեջ ճեմարանը բացվեցավ քանի մը տասնյակ աշակերտներով ու սկսավ հրապարակվիլ «Էջմիածին» պաշտոնաթերթը, որ իր վեցերորդ տարին կթեփակոխե։ Եվ դեռ պիտի գերազանցվի, ինչ որ կատարված է ցարդ։ Բայց ընդհանուր արդյունքը պիտի պայմանավորվի հայ ժողովուրդին իրագործելիք սերտ համերաշխության ու անքակտելի միասնականության շարին։ Մայր հայրենիքին մեջ այդ միությունը շքեղ, ամբողջական իրականություն մը դարձեր է։ Սակայն դադուժահայության մեջ քաղաքական հակամարտությունը, իսկ Ամերիկայի մեջ եկեղեցական պառակտումը խորացած է ավելի քան երբեք։

Վեհափառ Հայրապետին կոնդակը այդ ավերիչ բաժանումը վերցնելու սրտառուչ կոչ մըն է, ցավազին վերջ մը դարձանելու իրական բախասն մը, եթե այդ ախտով վարակվածները լսեն զայն։ Այդ ձայնը հարգատրեն հայկական է, խանդավաթորեն հայրական, անհունորեն սիրազեղ, զմայլելիորեն ազատ, ինքնավստահ, ներողամիտ։ Անոր մեջ Մոսկվայի շեշտ կամ Զեկայի թելադրություն տեսնելու փորձը բարոյական անհույս վատասերում մը պիտի մատնե։ Կոնդակի գեղեցիկ, հստակ ու հզոր լեզուն, իր արտահայտած հորդ զգացումներով ու դարերեն քաղված փորձառության իմաստունությամբ կը ներշնչե, կը հուզե, կտրապավորե, կազդարարե։ Քանի անգամ, հեռավոր ու մոտավոր անցյալին, «հոգեվոր քույրեր, օտարի ուստայնած դավադիր քակառն են ընկել, ազգայնորեն դիմակազրկվել»։ Կամ ապստամբեր են եկեղեցին «զոհ դառնալով իշխանատենչ ու փառամոլ դեկավաբների աադրանց»։ Կոնդակը հրավեր մըն է ձերբազատվելու այդ հին մեղքին ցանցերեն և կազմելու կուռ միասնականություն մը վերածնած մայր հայրենիքին, անոր ազգային պետության ու հայ եկեղեցիին շուրջ։

«Նոր Օր», 16 օգոստոս, Ֆրեզն-Կալիֆոռնիա

ԳԵՐ ԱՅՍ ԱՆԳԱՍ...

Դարձյալ Ամենայն Հայոց ալեհեր Հայրապետն է խոսողը, (տեսնել կռնդակը ա էջ), որ հավատարիմ հայ եկեղեցվա լայնխոհությամբ, համբերատարությամբ և ներողամտությամբ սրբազան ավանդներին, կրկին անգամ կոչ կրնի ամերիկահայ գաղութին, պառակտյալ Հայաստանյայց Եկեղեցվո ընդ որ զավակներուն, գեթ այս անգամ արագորեն և հաջողությամբ պսակվելու իր հանձնարարած առաքելությունը Առաջնորդ Գեորգի Տ. Տիրաման և. հպիսկոպոսին, Եկեղեցվո խախտված միասնականությունը վերահաստատելու մասին:

Կթելադրենք մեր ընթերցողներուն ուշի ուշով և կրկին ալ կրկին կարդալ ազգընտիր հայրենասեր Հայրապետին այս իրապես ոսկետառ կոնդակը, ուրկե կծորին սեր, գորգուրանք, ներողամտություն և հոգածություն հանդեպ Հայաստանյայց եկեղեցվո զավակներուն, հանդեպ ամենույն, հանդեպ իր ԲՈՂՈՐ հարազատներուն, հոգ չէ թե անոնցմե «պատկառելի հատված մը» գոհ ղառնալով հայ ժողովրդի ազգային. արժանապատվության և ընդհանուր բարոյական նկարագիրը մեծապես արատավորող ողբերգական դեպքերի, կենտրոնախույս տրամադրությունների և անհանդուրժելի նախասիրությունների, տարիներ շարունակ մեղանշում է Հայաստանյայց ազգային Առաքելական Ս. Եկեղեցու կենսատու միասնականության դեմ:

Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցու և առհասարակ ազգային կյանքի մեջ միասնականության վերահաստատման մասին մեզի հասնող այս վերջին կոնդակը արդարև թանկարժեք փաստաթուղթ մըն է՝ մեր սրբազան Հայրապետներու արժանապատիվ հաջորդ՝ Մայր Աթոռի այժմու գահակալին անսահման հայրենասիրության և հայասիրության մասին, և երբեք չէ մնա անարձագանք, պետք չէ ըլլա «Ձայն բարձրահանապատի» Ազգընտիր Վեհ Հայրապետ ըրած է ակնարկություններ իր հոգելույս նախորդին երջանկահիշատակ ետրին Ա. կաթողիկոսի Ամերիկահայ թեմին միասնականության վերահաստատման մասին կատարած ջանքերուն և անոր լիազորին՝ Մեծի Տանն Կիլիկիո այժմու արժանապատիվ գահակալին առաքելության ձախողության մասին:

Այս առիթով, խղճի կատարյալ հանդարտությամբ «Կռունկ» կհիշենք իր ընթերցողներուն, որ մենք հարյուր տոկոսով պաշտպան հանդիսացանք ինչպես հոգելույս Հայրապետի սրբազան լիազորին միասնականության համար առաջադրած ընդ որ ծրագիրներուն, նմանապես անկե ետք ուշ տվինք այդ տեղումն թափված ջանքերուն և մեր ամբողջ ուժով զորավիգ կանգնեցանք ամենայն Հայոց Գեորգ Զ Վեհ. կաթողիկոսի կողմի հանձնարարված մեր Ս. Առաջնորդին՝ անցյալ տարվան շրջանին, միասնականությունը վերահաստատելու անոր խոհուն և իմաստուն քայլերուն մեջ:

Հուսադրական կետ մը կարելի է համարել Վեհափառ Հայրապետի կողմի Առաջնորդ գեորգի Տ. Տիրաման և. հպիսկոպոսին առաքելության ճավարտած և ձախողած ըլլալ ընդունիլը, այլ զայն նկատելը «ցավագին ընդհատում» — հապաղում մը, զոր կնշանակե իր կողմեն խնդրվյալ վերաբացումը և հայրական ծեստ մը, պատեհություն մը ևս ընծայելու բաժանված հատվածին, իր ընթացքը վերականգնողության ենթակելու և հայտնաբերելու գործակցության ռզի մը, որպեսզի միասնականությունը գտնի իր բաղձալի հաջողությունը:

Վեհափառ Հայրապետին կողմի միասնականության վերահաստատման խնդրույն այս կերպ վերաբացումը և ձևավորումը նոր խրախույս մըն է իր գովելի եռանդ, տոկունություն, տակա, շրջադարձություն և իմաստություն հայտնաբերող առաքյալին՝ առաջնորդող գեորգի Տ. Տիրաման և. հպիսկոպոսին, սկսած գործը իր բաղձալի ավարտումին հասցնելու:

Եվ մենք կհավատանք թե կորովի, անսահանջ և շաղկապող կեցվածք մըն էր իմաստուն առաջնորդի կողմեն, և եկեղեցական կարգապահություն, որդիական հնազանդություն և իր հոգեւոր մոր Հայաստանյայց Եկեղեցվո օրինական իշխանության հովանիին ներքե վերադառնալու անկեղծ բաղձանքի արտահայտություն մը անջատված հատվածին կողմի՝ լիակատար հաջողությամբ պիտի պսակե Ամենայն Հայոց Հայրապետին միասնականության մասին հանձնարարած առաքելությունը, գեթ այս անգամ:

«Կռունկ», սեպտեմբերի 4:

